ԳՈՅԱՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎ ԱՄԵՐԻԿՅԱՆ ԴՐԱՄԱՏՈՒՐԳԻԱՆ

ԳԱԼՍՏՅԱՆ Բ. Ժ.

Ամերիկյան գոյափիլիսոփայությունը ունեցել է ուրույն ուղի, այն XX դ. ամերիկյան գրականության մեջ, ի տարբերություն մյուս գրական հոսանքների, ամենատարածուն և գործուն հոսանքն էր: Գոյափիլիսոփայությունը կարողացավ ներթափանցել գրական բոլոր ժանրերի մեջ և ունեցավ իր գաղափարակիրները: Այն մեծ տարածում գտավ հատկապես դրամատուրգիայում՝ շնորհիվ Յուջին Օ՛Նիլի, Վիլյամ Սարոյանի, Թեննեսի Ուիլյամսի, Արթուր Միլլերի, Էդուարդ Օլբիի և ուրիշների դրամատիկական ստեղծագործությունների:

Առաջին անգամ ամերիկյան դրամատուրգիայում գոյափիլիսոփայական որոնումների ենք հանդիպում Յուջին Օ՛Նիլի ստեղծագործություններում: Նա գոյափիլիսոփայական դրամատուրգիա մուտք գործեց «Սուգը Էլեկտրայի ճակատագիրն է» դրամայով, որի նյութը գրողը վերցրել է հունական անտիկ դիցաբանությունից: Ժամանակակից իրականությունն ինքն էր պարտադրում դիմել անցյալին, հետադարձ հայացքով ընդգրկել քաղաքակրթության անցած ուղին: Այդ հետագծում ավելի քան պարզ էին երևում ներկայի արատավոր երևույթների արմատները: Գոյափիլիսոփայական գրականության մեջ Յ. Օ՛Նիլը առաջինն էր, որ դիմեց Էսքիլեսի առասպելին և այն փորձեց ներկայացնել նոր տեսանկյունով: Նրան հետևեցին Ժան Ժիրոդուն («Էլեկտրա», 1937), Ժան-Պոլ Սարտրը («Ճանճեր», 1943), Ժան Անույը («Դու եղել ես այնքան քնքուշ, երբ փոքր էիր», 1972): Յուջին Օ՛Նիլը, դիմելով հին հունական առասպելին, ցանկացել է ընդգծել աշխարհի հավերժ անհեթեթության և անիմաստության գաղափարը՝ շեշտը դնելով ճակատագրի կողմից մարդու մշտատև դատապարտվածության վրա: Առասպելի հետ դրամայի ունեցած կառուցվածքային և կոմպոզիցիոն նմանությունը ամերիկյան դրամատուրգին թույլ է տալիս իրագործել Էսքիլեսի՝ ժառանգական նզովքի գաղափարը: Մենոնների մեղքը դուրս է գալիս մեկ սերնդի սահմաններից, ողբերգական հարաբերությունների կծիկը սկսում է բացվել այն պահից, երբ Մենոնը՝ գործող անձերի նախահայրը, խորտակում է սերը և կառուցում իր «ատելության տաճարը»: Այդ պահից սկսած՝ հերոսները փորձում են այս կամ այն կերպ ազատվել իրենց վրա կախված նզովքից: Նրանցից յուրաքանչյուրն իր մեջ կրում է Մենոնին: Հոգեբանական-ժառանգական բարդույթը, պարզվում է՝ անհաղթահարելի է, կյանքի ներդաշնակությունը՝ անհնարին: Ժամանակակից աստվածները ավելի խիստ են մարդու նկատմամբ, քան հեթանոս աստվածները: Եթե հին հունական դիցաբանության հեղինակը հույսը չի կորցրել, թե իրերի ճշմարտացի ընթացքը կվերականգնվի, մարդկանց արարքները կհամաձայնեցվեն իմաստուն աստվածների կամքին, ապա ամերիկացի դրամատուրգը ոչ մի հեռանկար չի տեսնում: Ամեն ինչ շրջված է գլխիվայր, ամենուր տիրում է խաբկանք, ատելություն, մահ, անելանելի իրավիճակ: Գնալով ավելի է խորանում կյանքի անիմաստությունը: Կյանքը մի

անելանելի քաոս է, որտեղից դուրս գալը անհնարին է: Դրամայի ողբերգական կծիկը շարունակում է բացվել. տանտիրուհին՝ Քրիստինան (Կլիտեմնեստրա), սպանում է պատերազմից վերադարձած ամուսնուն, նրա աղջիկը՝ Լավինիան (Էլեկտրա), նման իր հեթանոսական նախատիպին, վրեժ է լուծում մորից հոր սպանության համար: Մեղքը, որը ընկած է դրամայի հիմքում, որը ծանրացել է հերոսի ուսերին, պետք է դիտել ոչ թե որպես ընտանեկան, այլ համամարդկային չարիք: Օրիոնի (Օրեստես) և նրա հոր կերպարով Յ. Օ՛ Նիլը պատերազմը ներկայացնում է որպես անհեթեթ և հակաբնական երևույթ: Էրզան (Ագամեմնոն) պատերազմը համարում է անխուսափելի երևույթ, սպանությունը՝ սովորական գործ, իսկ ահա Էլեկտրա-Լավինիան այն դիտում է դաժան, անմարդկային գործողություն, պատերազմին մասնակցելը յուրաքանչյուր Մենոնի համար՝ պատվաբեր պարտք: Օրիոնը խորն է զգում պատերազմի էությունը, որը, բացի դժբախտությունից, անիմաստ ու անտեղի զոհերից, նյարդային հյուծախտից, հաշմանդամությունից, ոչինչ չի բերում: Նրան թվում է՝ պատերազմից հետո ամեն ինչ նորովի կսկսվի, մեկընդմիշտ վերջ կդրվի կյանքի անիմաստությանը և անհեթեթությանը, սակայն պարզվում է, որ այն շարունակական է, շարունակվելու է դեռ մարդու մեջ, և զգալով իր անզորությունը, իր կյանքի անիմաստությունը՝ Օրիոնը ինքնասպանություն է գործում:

Լավինիան փորձում է նոր կյանք սկսել, քաշվում է հեռավոր կղզիներից մեկը՝ հեռու անհեթեթ ու միապաղաղ աշխարհից, ջանում գտնել ինքն իրեն, սակայն գալիս է այն պարզ համոզման, որ ինքը մոր մի մասնիկն է, Մենոնների գերդաստանի մեղսակիր մի մասնիկը և ճակատագրի կողմից միշտ դատապարտված է մենության և մահվան՝ իր վրա կրելով Մենոնների տոհմի դարավոր նզովքը:

Կղզիներից վերադառնալով՝ մի պահ նրան թվում է, թե աշխարհում ոչինչ արժեք չունի, բացի սիրուց, որ սերը կփրկի աշխարհը, սակայն ի վերջո համոզվում է, որ «մեռյալներն ուժեղ են իրենից, և լավ կլինի նույնիսկ չփորձել նրանց դեմ պայքարել», քանի որ այդ պայքարը անիմաստ ու անհեթեթ աշխարհում նույնքան անիմաստ ու անհեթեթ է. մարդը անտես ուժերի կողմից միշտ դատապարտված է մենության ու մահվան: Նա, մեկընդմիշտ իրեն պարփակելով իր սեփական հոգու և միջավայրի մռայլության մեջ, որը խառնվում է գիշերվա խավարի մթությանը, փակվում է իր տնակում, որտեղ լույսի ոչ մի շող անգամ ներս չի թափանցում: Անցյալի հետ ունեցած իր անքակտելի կապերի մեջ Լավինիան տեսնում է ճակատագրի վճիռը: Պարտքի գիտակցումը բացառում է դրա հաղթահարումը, և հերոսուհուն մնում է հրաժարվել նոր կյանքից և միայնակ կրել նախնյաց խաչի ծանրությունը:

1946 թ. Յ. Օ՛ Նիլը գրեց իր երկրորդ գոյաբանական դրաման՝ «Սառույց վաճառողը կգա», որն ունի խորհրդանշական ծավալում: Դրաման կարելի է ընկալել որպես դատարկության և անիմաստության համընդհանուր ճանաչման միտումի երկ, որտեղ հերոսները գիտակցում են իրենց ամենօրյա «մաս առ մաս» մահը և պարզապես պատրաստվում են դիմավորել այն՝ որպես ցանկալի իրադրություն: Յ. Օ՛ Նիլի հերոսները անտարբեր են հաջողության, մրցակցության

նկատմամբ: Նրանց խորթ են եռանդի, նախաձեռնության, ձեռներեցության հատկությունները: Նրանք խորհրդանշում են մահ և քայքայում: Դրամայում խստագույնս պահպանված է տեղի և ժամանակի միտումը: Դրամայում գործողությունը կատարվում է գինետուն հիշեցնող օթևանում, որը բնակեցված է կյանքից քշվածներով, մարդկանցով, որոնք ժամանակին ունեցել են իրենց տեղն ու դերը, իսկ այսօր անպետք և հասարակությունից օտարված մարդիկ են, նրանք չունեն գեղեցիկ ապրելու ցանկություն, նրանց համար կյանքը տաղտկալի, անհեթեթ գոյության ընթացք է: Խախտվել է հերոսների կյանքի ընկալումը, նրանք ապրում են իրենց ցնորական աշխարհով: Յ. Օ՛ Նիլի հերոսները ազատ են «տարրական բարոյականությունից», տառապում են ձանձրույթից, միայնակ են ու դատարկ: Դատարկությունը նրանք փորձում են լցնել անհեթեթ, անիմաստ, մտացածին պատմություններով: Դրամայի գլխավոր հերոս Հիկին՝ «ազատ մարդը», որը տիրոջ ծննդյան օրերին միշտ երևում է օթևանում, փորձում է խախտել օթևանում ապրողների կյանքի միապաղաղությունը՝ ցանկանալով աշխարհը վերածել սառցե անապատի, և իր երազանքը իրականացնելու համար իր գործունեության մեջ է ներքաշում օթևանի բնակիչներին՝ Հարի Հուպերին, Լերրիին, պատանի Պերիտին: Նա պատրաստ է սպանել նրան, ով կփորձի իր երազանքը խորտակել: Հիկին վրիժառությամբ է լցված սառույց վաճառողի հանդեպ, որը իրականում չկա, գոյություն չունի, սակայն հերոսի համար նա իրական մարդ է, անգամ իր կնոջ սիրեկանն է, ուստի նրանից վրեժ է լուծում՝ սպանելով իր իսկ կնոջը: Դրամայի հետաքրքիր կերպարներից է Պերիտը, որի արարքները նույնքան անիմաստ ու անհեթեթ են, բանական մարդու կողմից անհասկանալի և չբացատրվող, որքան Հիկիինը: Պերիտը աստիճանաբար գալիս է այն համոզման, որ ոչնչից ավելի բնական «ոչինչ. չկա: Իրեն հնարավոր է թվում անգամ, թե ինքն էլ «ոչինչ» է արդեն, և իր ապրելն էլ անիմաստ է, ուստի ինքնասպանություն է գործում: Յ. Օ՛ Նիլը չի դատապարտում իր հերոսներին, ընդհակառակը՝ նրանց նայում է նրանց աչքերով: Միակ հերոսը, որը գործողությանը չի մասնակցում, Լերրին է. նա փիլիսոփա հայեցող է: Գիտակցելով գոյի անելանելիությունը՝ Լերրին կարծես ելք փնտրելու չի էլ մղվում: Նա իր գոյությունը օթևանում շարունակելու է իբրև կենդանի դիակ: Շուրջը դանդաղ, գոյափիլիսոփաների նախասիրած աստիճանական մահն է, ինքնամեկուսացումն աշխարհից: Յ. Օ՛ Նիլի ստեղծագործական մեթոդը առավելապես հոգեբանական է: Նրա ուշադրության կենտրոնում հոգեկան աշխարհի բարդ տեղաշարժերն են, հասարակական տրամադրությունների ու հոգեվիճակների հերթագայությունը: Ամերիկացի գրողը իր դրամաներում շեշտը դնում է մարդկային հոգեբանության դրսևորումների արտացոլման, ներաշխարհի բարդ ու հակասական խմորումների երևակման վրա: Հոգեկան այս դրսևորումներում պարզորոշ երևում է միջավայրի ազդեցությունը, գրեթե շոշափելի են դառնում հասարակական կյանքի ազդակները: Յ. Օ՛ Նիլը ամերիկյան գոյափիլիսոփայական դրամայում ուշադրությունը սևեռում է մարդու բարդ ու հակասական ներաշխարհի բացահայտման վրա՝ երևակելու մարդու հոգեկան աշխարհի անտեսանելի շերտերը, հաղորդակցվելու այդ ներքին աշխարհի գալարումներին: Նրա

դավանած հոգեբանական մեթոդը շուտով որդեգրվում է ամերիկյան գոյափիլիսոփա դրամատուրգների կողմից (Վ. Սարոյան, Թ. Ուիլյամս, Ա. Միլլեր, Է. Օլբի):

«Երկար ճանապարհորդություն դեպի գիշեր» դրաման (1956) հոգեբանական էտյուդ է: Հոգեբանական բարդույթները դրամայի հերոսներին նետում են անհանգստությունների ոլորտ: Ջեյմս Տիրոուն, օրինակ, ներքուստ զայրանում է, որ իր ապրած կյանքը եղել է անիմաստ ու աննպատակ, իր կուտակած գումարները, իր ժլատությունը ընտանիքի անդամներին, բացի դժբախտությունից, ոչինչ չեն բերել, ավելին՝ նրանց միմյանցից հեռացրել են, օտարել: Արտաքնապես երջանիկ ընտանիքը դառնում է դաժան ու անհասկանալի թշնամանքի զոհը: Ջեյմսի կինը, որը ժամանակին խելամիտ էր և անչափ թովիչ, դարձել է կիսախելագար, թմրամոլ: Ավագ որդին՝ Ջեյմը՝ անգործ հարբեցող, հասարակաց տան մշտական այցելու: Կրտսեր որդին պատերազմից իր հետ բերել է թո-քախտ հիվանդություն: Հերոսների համար այս կյանքը անհասկանալի մղձավանջների մի շղթա է, ուր մարդը «դատապարտված է ապրելու» և իր ուսերին կրելու մարդ լինելու ողջ ծանրությունը: Մայրն այն փորձում է իրականացնել հիշողության թելերի մեջ: Հուսահատական «կենսաբանական» վճիռը տեղը զիջում է ապրած կյանքի վերաիմաստավորմանը, երջանիկ, ամբողջական անցյալի, գոյի խոր ինքնաբավ զգացողությանը: Յ. Օ՛ Նիլի հերոսները, բացի Էդմունդից, դատապարտված են մահվան, նրանք վաղ թե ուշ կործանվելու են, որովհետև ընդունակ չեն ընդվզման և իրենց ուսերին կրելու մարդ լինելու ողջ ծանրությունը: Գրողը եզրակացնում է, որ արվեստը կփրկի աշխարհը անհեթեթությունից և անիմաստությունից: Յ. Օ՛ Նիլը ցուցադրում է կյանքի բանաստեղծական ընկալման ձևավորումը: Նրա դրաման լուսավորված է այդ բանաստեղծականությամբ: «Էդմունդը,- գրում է Լ. Անդրեևը,- սկիզբ է դրել ամերիկյան դրամատուրգիայի երիտասարդ հերոսների պատկերասրահին, հերոսներ, որոնք դիմակայում են քաոսին, իրենց մեջ կրում իսկական մարդկայնության կայծը: Այս իմաստով էլ Յ. Օ՛ Նիլը ամերիկյան դրամայի պատրիարքն է, նրա ավանդույթների սկզբնավորողը»[1]: Ռուս գրականագետը սխալվում է. ամերիկյան դրամատուրգիայում Վիլյամ Սարոյանն առաջինն էր, որ կերտեց կյանքի դժվարություններին դիմակայող հերոս: Նրա հերոս Ջոնը («Քո կյանքի ժամերը», 1939) դրա վառ հավաստումն է: Ամերիկյան դրամայի «պատրիարք» պետք է համարել ոչ թե Յուջին Օ՛ Նիլին, այլ Վիլյամ Սարոյանին:

Ամերիկյան գոյափիլիսոփայական դրամատուրգիայում իր հատուկ տեղն ունի Թեննեսի Ուիլյամսը՝ Յ. Օ՛ Նիլի և Վ. Սարոյանի հետևորդը, որն իր ուսուցիչներից ժառանգել է ստեղծագործական, հոգեբանական մեթոդը, կերպարներ կերտելու արվեստը: Թ. Ուիլյամսի դրամաներից հատկանշական են «Ապակե գազանանոցը» (1943), «Կատուն շիկացած տանիքի վրա» (1955), «Հրեշտակների ճակատամարտը» (1940):

«Ապակե գազանանոցը» Թ. Ուիլյամսի առաջին գոյափիլիսոփայական դրաման է, որի հիմքում ընկած է մարդու միայնակության, առանձնության, մահվան

[1] Արտասահմանյան գրականության պատմություն, ետհոկտեմբերյան շրջան, Երկրորդ մաս, 1945-1970, Ե., 1985, էջ 493:

դատապարտվածությունը: Թ. Ուիլյամսի հերոսի ճակատագիրը կանխորոշված ողբերգական է: Ամանդա ընտանիքում մայրն ապրում է հիշողությունների ցնորական աշխարհում, աղջիկը՝ Լաուրան, սիրո հիվանդ է, որդին՝ Թոմը՝ «պակասավոր իդեալ»: Խաթարված է Ուինգֆիլդների կյանքի ըմբռնողությունը: Նրանք փակված են իրենց «ապակե գազանանոցի» մեջ, որը լցված է արտաքին աշխարհի նկատմամբ դաժանությամբ: Դրամասիրությունը, ընչաքաղցությունը կուրացրել են Ամանդային, և նա չի էլ նկատում, թե ինչպես է խորտակում զավակների կյանքը, որը նրանց համար դարձել էր ձանձրալի մահապատիժ: Թոմը, որ այնքան կապված էր մորն ու քրոջը, անձնվիրաբար սիրում էր նրանց, դավաճանում է: Նա ի վերջո հասկանում է, որ «ապակե գազանանոցը» վարկաբեկում է կյանքը, որ այն իրենց օտարացման գլխավոր պատճառն է: Գիտակցելով իրենց կյանքի անիմաստությունը, «ապակե գազանանոցի» անհեթեթությունը՝ նա ընդվզում է, որը նախ արտահայտվում է մորը դավաճանելով, ապա գազանանոցի մոմերը հանգցնել ցանկանալով:

Գոյափիլիսոփայական խորք ունի «Կատուն շիկացած տանիքի վրա» դրաման, որի հիմքում դրամատուրգը կրկին դրել է կյանքի անիմաստության և անհեթեթության գաղափարը: Գլխավոր հերոսը՝ մեծ հայրիկը, որը Միսիսիպիում ամենախոշոր հողատերերից է, իր ողջ կյանքը ապրել է ստի ու կեղծիքի մեջ: Նրա կյանքը եղել է անիմաստ, անհեթեթ: Առաջին հայացքից թվում է, թե նա ապրել է երջանիկ կյանքով՝ հարստություն, ընտանիք, սակայն իրականում նա պարզապես կատարել է իր պարտականությունները ընտանիքի անդամների հանդեպ: Նա տարիների ընթացքում համոզվել է, որ այս կյանքը անիմաստ է, և նրանից դուրս գալ հնարավոր չէ, ապրելու համար պետք է պարզապես հարմարվել այս անհեթեթ կյանքին, և միակ միջոցը համարում է կեղծիքի և ստի մեջ ապրելը: Մահամերձ ծերունին նույնը խորհուրդ է տալիս ավագ որդուն, որն ընդվզման փորձեր է կատարում՝ իրեն տալով հարբեցողության, ինչն ի վերջո նրան կործանելու է:

Թ. Ուիլյամսի լավագույն գոյափիլիսոփայական գործերից է «Հրեշտակների ճակատամարտը», որը հիշեցնում է Վ. Սարոյանի «Հեյ, ո՞վ կա այդտեղ» դրաման: Վիլյամ Սարոյանի նման Թ. Ուիլյամսը անողոք խրստությամբ է խոսում ամերիկյան իրականության ստվերոտ կողմերի մասին, թե մարդու համար որքան դժվար է ապրել այն հասարակությունում, որտեղ նրան սպասում են Լինչի դատաստանը, ամենօրյա հետապնդումները, ապականված բարքերն ու շրջապատի քար անտարբերությունը: Հերոսներն ապրում են դաժան իրականության մեջ, որտեղ ինչպես իրենք են ասում՝ «մարդկանց գնում և վաճառում են»: Վելը և Լեյդը օտար են այդ հասարակության մեջ: Մենության, օտարության զգացումը Թ. Ուիլյամսի հերոսները Վ. Սարոյանի հերոսների նման փորձում են լուծել իրենց անխաբ միասնությամբ, միմյանց նկատմամբ ունեցած փոխադարձ սիրով, որը, նրանց կարծիքով, կփրկի ինչպես իրենց, այնպես էլ աշխարհը կործանումից, իրենց կօգնի դիմակայել կյանքի բոլոր դժվարություններին, անգամ՝ մահվանը: Նրանք ընդվզում են մահվան դեմ, թեև գիտակցում են նրա անխուսափելիությունը: Իրենց գոյության խորհուրդը հերոսները տեսնում են ապրելու և ուրիշին երջանկացնելու մեջ: Այս բարձր գիտակցմամբ էլ զոհվում է Վել

Քսավիեն, իսկ Լեյդ Քերոլը փորձում է շարունակել իրենց գործը: Նրան չի վախեցնում, չի ընկճում Վելի մահը, նա հեշտ կոտրվողներից չէ: Լեյդը, արհամարհելով շերիֆի սպառնալիքները, իր ուսերին է գցում մահացած սիրած տղայի բաճկոնը և հեռանում:

Ամերիկյան գոյափիլիսոփայական դրամատուրգիայում նշանակալից երևույթ էր Ա. Միլլերի դրամատուրգիան: Ա. Միլլերը, իր դրամաներում պատկերելով ամերիկյան կյանքը, Յ. Օ՛ Նիլի, Թ. Ուիլյամսի համեմատությամբ ավելի է սրում ընտանիքի կործանման, մարդկային տառապանքի սոցիալական պատճառաբանվածությունը: Նա օգտագործում է հոգեբանական վերլուծության ասպարեզում գոյափիլիսոփաների ձեռք բերած որոշ նվաճումներ: Ա. Միլլերի գոյափիլիսոփայական ստեղծագործություններից իրենց հարցադրումներով աչքի են ընկնում «Բոլորն իմ որդիներն են» (1947), «Շրջիկ առևտրական գործակալի մահը» (1949), «Տեսարան կամրջից» (1955) դրամաները:

«Տեսարան կամրջից» դրաման բացվում է հեղինակի համառոտ նախաբանով, որը ներկայացնում է նրա գեղագիտական հավատամքը նոր փուլում: Ա. Միլլերը կարծում է, որ անհրաժեշտ է ոչ միայն բացահայտել հերոսի սոցիալ-հոգեբանական կերպարը՝ կապված ժամանակի հետ, այլև ամեն մի անհատականության մեջ տեսնել «ժամանակի կապը»: Դիմելով առասպելին՝ Ա. Միլլերը նրա մեջ չի տեսնում մեծ, ամբողջ պատմության միջով անցնող երևույթների սոցիալ-հոգեբանական ընդհանրացումներ: Նա առասպելը մեկնաբանում է իբրև ճակատագրից մարդու կախվածության ընդհանրացված մարմնավորում, իսկ ճակատագիրը ներկայացնում է իբրև ավերիչ սեռական բնազդների իշխանություն: Դրամայում զարգանում են երկու զուգահեռ կոնֆլիկտներ՝ իտալացի վտարանդիներ Մարկոյի և Ռուդոլֆի բախումը ամերիկյան օրենքներին և Էդիի խելագար կենդանական կիրքը իր զարմուհու՝ Կետրինի նկատմամբ: Արթուր Միլլերը օգտագործում է Էդիպ արքայի մասին հին հունական առասպելը՝ շեշտը դնելով ճակատագրական պահերի վրա: Միլլերը փորձում է հաստատել այն միտքը, որ մարդը միշտ դատապարտված է ճակատագրի կողմից, նրա յուրաքանչյուր արարք փոխպայմանավորված է ճակատագրով, նա կատարում է այն բոլոր արարքները, ինչը նրան թելադրում են անտես ուժերը: Էդին (նրա անունը համահունչ է Էդիպ արքայի անվանը) զրկված է մարդկային վեհ հատկանիշներից, մատնիչ է, դավաճան, տառապում է սեռական անզսպությամբ, նրա համար միևնույն է, թե ում հետ սեռական կապի մեջ կմտնի: Ռուդոլֆը մարմնավորում է գոյափիլիսոփայական հոսունությունը, քաոսայնությունը: Նա մերթ անշահախնդիր սիրահար է, մերթ հաշվով ամուսնանալ ձգտող մարդ, նրա մեջ մերթ գլուխ է բարձրացնում կանացիությունը, մերթ առնականությունը. նա գիտե և՛ ատել, և՛ սիրել, և՛ ընդվզել, և՛ տեղի տալ: Դրաման կազմված է երկու դրամաներից: Եթե առաջին դրամայում Ա. Միլլերը շեշտը դնում է ճակատագրից դատապարտվածության վրա, ապա երկրորդում հետևողականորեն բացահայտում է կյանքի անհեթեթության գաղափարը: Այս դրաման ունի սոցիալական ուղղվածություն: Հերոսները՝ Մարկոն և Ռուդոլֆը, դժգոհ են իտալական կյանքից, որը մարդկանց դատապարտում է մահվան: Նրանք փորձում

են երջանկություն գտնել Ամերիկայում, սակայն այստեղ ևս չեն գտնում, քանի որ այստեղ, ինչպես իրենք են ասում, «ստորության և դավաճանության դեմ օրենքներ չկան»: Հերոսները գալիս են այն եզրակացության, որ ամենուր կյանքը անիմաստ է, որ մարդիկ դատապարտված են իրենց կյանքը քարշ տալ այս կամ այն երկրի սանդուղքների վրա՝ անիմաստ ու աննպատակ:

«Բոլորն իմ որդիներն են», «Շրջիկ առևտրական գործակալի մահը» դրամաներում Ա. Միլլերը իր ուշադրությունը սևեռել է մարդու օտարվածության խնդրի վրա: Երկու դրամաներում էլ օտարվածության պատճառը ընտանիքի հայրն է: «Բոլորն իմ որդիներն են» դրամայի գլխավոր հերոս Ջո Բելլերը Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ ռազմաճակատին է տրամադրում ինքնաթիռների ոչ պիտանի պահեստամասեր՝ առանց փոքր ինչ խորհելու հետագա անցանկալի դեպքերի մասին: Նրա որդին զինվորական օդաչու է և կարող է օդանավի անսարքության զոհը դառնալ: Իմանալով հոր խարդավանքի մասին, չցանկանալով իր ուսերին ծանրացած տեսնել անմեղ զոհ դարձած օդաչուների մահը՝ նա իմացաբար գնում է դեպի մահ՝ այն համարելով փրկություն անօրեն, անհեթեթ աշխարհից: Հորից երես է թեքում նաև կրտսեր որդին, և Ջոն ինքնասպանություն է կատարում, որը պետք է դիտել որպես հոր և որդիների օտարվածության գլխավոր հետևանքը:

Իսկ ահա «Շրջիկ առևտրական գործակալի մահը» դրամայի հերոսը՝ հայր Վիլլին, որ իր ողջ կյանքում եղել է որդու՝ Բիֆի կուռքը, սիրային կապի մեջ է մտնում Հեփիի հետ՝ տրվելով հրապուրանքներին, զգայականության պահերին մոռանալով իր սիրելիներին: Եվ փլուզում է որդու վեհ իդեալը՝ նրան զրկելով ապրելու կամքից:

Հոր սիրային կապը խախտում է Լեմոնների ընտանիքի ներքին զարմանալի միասնությունը՝ հիմք դնելով օտարացվածության, հիմնիվեր կործանելով ընտանիքը:

Ամերիկյան գոյափիլիսոփա դրամատուրգների՝ Յ. Օ՛ Նիլի, Թ. Ուիլյամսի, Ա. Միլլերի, Է. Օլբիի գոյապաշտական հածումներում տեսնում ենք աշխարհի անհեթեթության մոդելը, որն էլ համարվում է ամերիկյան գոյափիլիսոփայական դրամատուրգիայի հենքը: Շնորհիվ Վ. Սարոյանի՝ ամերիկյան գոյափիլի-սոփայական դրամատուրգիայում իր մնայուն տեղն է հաստատում գոյության փիլիսոփայական խորհուրդը: Ամերիկահայ գրողը իր դրամաներով, ինչպես նաև մի շարք արձակ գործերով ամերիկյան գոյափիլիսոփայական գրականության մեջ հաստատում է փիլիսոփայական հիմնաբևեռները՝ անհեթեթությունն ու ընդվզումը՝ դրանք քննելով կողք կողքի: «Կան գրողներ, որ ընդունում են այդ,- հավաստում է Վ.Սարոյանը,- ես հաստատ կոտրեցի դուռը ինձնից հետո եկող բոլոր դրամատուրգների համար: Նրանց մեջ են Թեննեսի Ուիլյամսը, Օլբին և ամբողջ խումբը»[2]:

Վ. Սարոյանի հերոսները ընդվզում են կյանքի անիմաստության և ան-հեթեթության դեմ: Նրա դրամաների հոռետեսության մթին երանգնե-րում անգամ որոնում ենք կյանքի առօրեական, գրողի և հերոսների համար սիրելի բույրը:

---

[2] **Սարոյան Վ.,** Պատմվածքներ, հարցազրույցներ, էսսեներ, հուշեր, Ե., 1999, էջ 150:

ЭКЗИСТЕНЦИАЛИЗМ И АМЕРИКАНСКАЯ ДРАМАТУРГИЯ

ГАЛСТЯН Б. Ж.

Резюме

В литературе США XX века экзистенциализм был одним из самых влиятельных и модных литературных течений. Велико влияние философии экзистенциализма особенно в драматургии. Творчество таких американских драматургов, как Юджин О' Нил, Вильям Сароян, Теннеси Уильямс, Артур Миллер, Эдуард Олби демонстирует абсурдность и хаос реального мира. В частности, очень характерен для современной литературы экзистенциалистский мотив "трагического жеста"- героического поступка личности, не рассчитывающей на какие-либо плоды, не верящей в результаты человеческих действий, но все же совершающей тот или иной подвиг, во имя самоутверждения и совести.